ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԸՆԹԱՑԻԿ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

№ ՀՀ-ՏԿԶՆ-ԳՀԾՁԲ-18/1-6/4

ք. Երևան «02» մարտի 2018թ.

ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարությունը, ի դեմս աշխատակազմի ղեկավար Մ.Բաղդասարյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Մ-Բի-Ռ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Վ. Բաղդասարյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ավտոմեքենաների ընթացիկ սպասարկման և վերանորոգման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված երեք աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության առավելագույն գինը կազմում է 1731600 (մեկ միլիոն յոթ հարյուր երեսունմեկ հազար վեց հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:[1]

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված

---

[1] *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:*

հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 21 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն	«Մ-Բի-Ռ» ՍՊԸ
ք. Երևան, Հանրապետության հրապարակ	ք. Երևան, Մյասնիկյան 22/4
Կառավարական տուն 3	«Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	Հ/Հ 220083335012000
Հ/Հ 900011018513	ՀՎՀՀ 08417829
ՀՎՀՀ 02578338	
Աշխատակազմի ղեկավար	Տնօրեն
Ս. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ	Վ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Հավելված N 1
«02» մարտի 2018թ. կնքված
№ ՀՀ-ՏԿԶՆ-ԳՀԾՁԲ-18/1-6/4 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը
1	50111130/1	*Ներկայացվում է կից	դրամ	1731600	1	ք.Երևան	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո մինչև 2018թ. դեկտեմբերի 15-ը:

Անսարքություններն անհրաժեշտ է վերացնել պատվիրատուի կողմից հայտը ստանալուց 1 աշխատանքային օրվա ընթացքում:

***Տեխնիկական բնութագիր**

ՀՀ դրամ

SU-1 ծառայությունների և SU-2 ընթացքում օգտագործվող պահեստամասերի քսայուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները		1 չափաբաժին				
		Տրանսպորտային միջոցների մակնիշները (տեսակները)				
		5 տեղ առջևի տանող ա/մ				4x4 տիպի ավտոմեքենաներ
		TOYOTA CAMRY 2.5 GAS 2013թ.VIN-JTNBFYFK103025885 և 2011թ. VIN-JTNBF4FK703005049	TOYOTA COROLLA 1.6 GAS 2011թ. VIN-JTNBV58E40J158709 և 2010թ. VIN-JTNBV58E50J112631	PEUGEOT PARS 1.8 2007թ. VIN-NAAN1MAD57E082083 և 2007թ.VIN-NAAN1MAD17E082081	RENAULT LOGAN 1.4 2015թ. VIN-X7LLSRB2HFH749244, և 2015թ. VIN-X7LLSRB2HFH749135	LEXUS GX 4.6 GAS 2011թ. VIN-JTJJM7FX405040796
1	2	3	4	5	6	7
SU-1 ներառվող ծառայությունների անվանումը						
1	Էլեկտրական համակարգի աշխատանքի ստուգում	10	10	10	10	10

2	Ղեկավարման համակարգի աշխատանքի ստուգում	10	10	10	10	10
3	Շարժիչի վերականգնում	100000	90000	90000	90000	100000
4	Շարժիչի մասնակի նորոգում	10	10	10	10	10
5	Շարժիչի բարձիկի հանում և տեղադրում	6000	6000	6000	6000	6000
6	Նույնը DOHC դեպքում	10	10	10	10	10
7	Շարժիչի առջևի կափարիչի հանում և տեղադրում	10	10	10	10	10
8	Բաշխիչ լիսեռի կափարիչի հանում և տեղադրում	6000	6000	6000	6000	6000
9	Շարժիչի ատամնավոր փոկի փոխում	10	10	15000	15000	25000
	2 Ղեկավարման, սնման և յուղման համակարգ					
10	Յուղի և յուղի զտիչի փոխարինում	2000	2000	2000	2000	2000
11	Յուղի պոմպի փոխարինում	10	10	10	10	10
12	Ղեկավարման բլոկի վերանորոգում	5000	5000	5000	5000	5000
13	Բռնկման կարգավորում	1000	1000	1000	1000	1000
14	CO կարգավորում	1000	1000	1000	1000	1000
15	Խարնարակի հանում և տեղադրում	10	10	10	10	10
16	Խարնարակի վերանորոգում	10	10	10	10	10
17	Օդի զտիչի փոխարինում	500	500	500	500	500
18	Սրահի օդի զտիչի փոխում	500	500	500	500	500
19	Ինժեկտորի ֆորսունկաների փոխարինում	2000	2000	2000	2000	2000
20	Ինժեկտորի ֆորսունկաների մաքրում	12000	12000	12000	12000	12000
21	Բենզամղիչի փոխարինում	6000	6000	6000	6000	6000
22	Վառելիքի զտիչի փոխարինում	5000	5000	5000	5000	5000
23	Դրոսելային փականի լվացում և կարգավորում	4000	4000	4000	4000	4000
	3. Սառեցման և արտածման համակարգ					
24	Հովհարի փոկի հանում և տեղադրում	10	10	10	10	10
25	Հովհարի հանում և տեղադրում	4000	4000	4000	4000	4000
26	Ռադիատորի հանում և տեղադրում կոնդիցիոների դեպքում	5000	5000	5000	5000	5000

27	Ռադիատորի վերանորոգում	30000	30000	10000	10000	10000
28	Ռադիատորի հանում,մաքրում և տեղադրում	10	10	10	10	10
29	Թերմոստատի փոխարինում	5000	5000	5000	5000	5000
30	Հովացման հեղուկի փոխարինում	2000	2000	2000	2000	2000
31	Ջրի պոմպի փոխարինում	12000	12000	12000	12000	12000
32	Ջրի պոմպի վերանորոգում	10	10	10	10	10
33	Ընդարձակող բաքի փոխարինում	10	10	10	10	10
34	Խլարարի հանում և տեղադրում	2000	2000	2000	2000	2000
35	Ռադիատորի փողրակի հանում և տեղադրում	10	10	10	10	10
36	Սրահի ռադիատորի հանում և տեղադրում	25000	25000	25000	25000	25000
37	Սրահի ռադիատորի վերանորոգում	10	10	10	10	10
	4. Կցորդում, ՓՏ և ԱՓՏ					
38	Բանվ.կամ գլխ.գլանի հանում և տեղադրում	10	10	3000	3000	10
39	Բանվ.կամ գլխ.գլանի վերանորոգում	10	10	10	10	10
40	Կցորդման սկավառակների և առանցքակալի փոխարինում	10	10	25000	25000	10
41	Կցորդման ոտնակի հանում և տեղադրում	10	10	10	10	10
42	Կցորդման ճոպանի հանում և տեղադրում	10	10	3000	3000	10
43	ՓՏ-ի հանում և տեղադրում	10	10	20000	20000	10
44	ՓՏ-ի վերանորոգում	10	10	25000	25000	10
45	ՓՏ-ի առանցքակալի փոխարինում	10	10	10	10	10
46	ՓՏ-ի պատյանի հանում և տեղադրում	10	10	10	10	10
47	ԱՓՏ-ի հանում և տեղադրում	30000	30000	30000	30000	30000
48	ԱՓՏ-ի վերանորոգում	95000	95000	10	10	100000
49	ԱՓՏ-ի առանցքակալների հանում և տեղադրում	40000	40000	40000	40000	40000
50	ԱՓՏ-ի կարտերի հանում և տեղադրում	10	10	10	10	10
51	ԱՓՏ-ի ներդիրների հանում և տեղադրում	10	10	10	10	10
52	ԱՓՏ-ի կոնվերտերի հանում և տեղադրում	10	10	10	10	10
53	ԱՓՏ-ի տանող սկավառակի փոխարինում	45000	45000	45000	45000	45000

54	ԱՓՏ-ի յուղի փոխարինում	3000	3000	3000	3000	3000
55	ԱՓՏ-ի յուղի զտիչի փոխարինում	12000	12000	12000	12000	12000
	5. Կախոց					
56	Առջևի կախոցի լիակատար քանդում և հավաքում	10	10	10	10	10
57	Տրավերսի հանում և տեղադրում	10	10	10	10	10
58	Ձախ կամ աջ հոդակապի հանում և տեղադրում	5000	5000	5000	5000	5000
59	Անվակունդի առանցքակալի փոխարինում	5000	5000	5000	5000	5000
60	Հետևի անվակունդի առանցքակալի փոխարինում	5000	5000	5000	5000	5000
61	Ձախ կամ աջ հոդակապի խցուկների փոխարինում	5000	5000	5000	5000	5000
62	Ձախ կամ աջ հոդակապի առանցքակալների փոխարինում	10	10	10	10	10
63	Ցնցամեղմիչի թասակի փոխարինում	5000	5000	5000	5000	5000
64	Զսպանակի հանում և տեղադրում	10	10	10	10	10
65	Առջևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում	6000	6000	6000	6000	6000
66	Ներքևի լծակի վռանների տեղադրում	3500	3500	3500	3500	3500
67	Ներքևի լծակի վռանների փոխարինում	5000	5000	5000	5000	5000
68	Առջևի աջ կամ ձախ ձգանների հանում և տեղադրում	3500	3500	3500	3500	3500
69	Միջին ձգանի հանում և տեղադրում	10	10	10	10	10
70	Ճոճանակային լծակի հանում և տեղադրում	10	10	10	10	10
71	Վերևի լծակի հանում և տեղադրում	10	10	10	10	5000
72	Վերևի լծակի վռանի փոխարինում	10	10	10	10	2500
73	Գնդե հոդակապի փոխարինում	5000	5000	5000	5000	5000
74	Ծայրականի հանում և տեղադրում	2500	2500	2500	2500	2500
75	Առջևի կայունարարի հանում և տեղադրում	2000	2000	2000	2000	2000
76	Առջևի կայունարարի կանգնակի փոխարինում	3000	3000	3000	3000	3000
77	Առջևի կայունարարի վռանի փոխարինում	2500	2500	2500	2500	2500
78	Առջևի կայունարարի առջևի վռանի փոխարինում	10	10	10	10	10

79	Հետևի զսպանակի փոխարինում	10	10	10	10	10
80	Հետևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում	5000	5000	5000	5000	5000
81	Հետևի ձգաձողի հանում և տեղադրում	10	10	10	10	3000
82	Հետևի երկաթաձողի հանում և տեղադրում	10	10	10	10	3000
83	Կայունարարի կանգնակի հանում և տեղադրում	3500	3500	3500	3500	3500
84	Հետևի կայունարարի վռանի փոխարինում	3000	3000	3000	3000	3000
85	Հետևի անկյունագծային լծակի հանում և տեղադրում	10	10	10	10	3000
86	Անկյունագծային լծակի վռանների փոխարինում	10	10	10	10	3000
87	Անվաբացքի կարգավորում	5000	5000	5000	5000	5000
88	Ընթացամասի յուղում	10	10	10	10	1000
	6.Ղեկային մեխանիզմ					
89	Ղեկային կալունի հանում և տեղադրում	10000	10000	10000	10000	10000
90	Ղեկային կալունի վերանորոգում	20000	20000	20000	20000	20000
91	ՂԿ-ի առանցքակալի և/կամ վռանի փոխարինում	10	10	10	10	10
92	Ղեկային կալունի փոշեթիկնոցի փոխարինում	10	10	10	10	10
93	Ղեկային կալունի ձողի փոխարինում	10	10	10	10	10
94	Ղեկային կալունի խցուկի փոխարինում	10	10	10	10	10
95	ՂԿ-ի հոդակապերի հանում և տեղադրում	10	10	10	10	10
96	Հիդրոուժեղարարի պոմպի հանում և տեղադրում	5000	5000	5000	5000	5000
97	Հիդրոուժեղարարի փոկի հանում և տեղադրում	10	10	10	10	10
98	Հիդրոուժեղարարի փոխրակի հանում և տեղադրում	10	10	10	10	10
99	Նույն կոդիցիոների դեպքում	10	10	10	10	10
100	ՀՈՒ ՂԿ-ի հանում և տեղադրում	10	10	10	10	10
101	ՀՈՒ ՂԿ-ի վերանորոգում	10	10	10	10	10
	7. Արգելակային համակարգ					

102	Գլխ.գլանի հանում և տեղադրում	1000	1000	1000	1000	1000
103	Գլխ. գլանի վերանորոգում	10	10	10	10	10
104	Վակումային ուժեղարարի հանում և տեղադրում	2000	2000	2000	2000	2000
105	Վակումային ուժեղարարի հանում,վերանորոգում և տեղադրում	10	10	10	10	10
106	Բանվ. գլանի հանում և տեղադրում	10	10	10	10	10
107	Բանվ. գլանի վերանորոգում	10	10	10	10	10
108	Արգելակային համակարգի օդահանում	1000	1000	1000	1000	1000
109	Առջևի սուպպորտի հանում և տեղադրում	1000	1000	1000	1000	1000
110	Հետևի սուպպորտի հանում և տեղադրում	1000	1000	1000	1000	1000
111	Առջևի սուպպորտի վերանորոգում	10	10	10	10	10
112	Հետևի սուպպորտի վերանորոգում	10	10	10	10	10
113	Արգելակային փոխրակի փոխարինում	1000	1000	1000	1000	1000
114	Առջևի արգելակային կոճղակների փոխարինում	5000	5000	5000	5000	5000
115	Հետևի սկավառակային կոճղակների փոխարինում	5000	5000	5000	5000	5000
116	Հետևի կոճղակների փոխարինում	10	10	10	10	10
117	Առջևի արգելակային սկավառակի փոխարինում	4000	4000	4000	4000	4000
118	Հետևի արգելակային սկավառակի փոխարինում	4000	4000	4000	4000	4000
119	Առջևի արգելակային սկավառակի հղկում	4000	4000	4000	4000	4000
120	Հետևի արգելակային սկավառակի հղկում	4000	4000	4000	4000	4000
121	Արգելակային հեղուկի փոխարինում	10	10	10	10	10
122	Արգելակային սեղմակի հանում և տեղադրում	10	10	10	10	10
123	ABS-ի հանում և տեղադրում	5000	5000	5000	5000	5000
124	ABS-ի վերանորոգում	10	10	10	10	10
125	Ձեռքի արգելակի ճոպանի հանում և տեղադրում	10	10	10	10	10
126	Ձեռքի արգելակի մեխանիզմի վերանորոգում	10	10	10	10	10

	8.Էլեկտրասարքավորում					
127	Չափիչ սարքերի հանում և տեղադրում	10	10	10	10	10
128	Գեներատորի հանում և տեղադրում	5000	5000	5000	5000	5000
129	Գեներատորի վերանորոգում	5000	5000	5000	5000	5000
130	Գեներատորի իրանի հանում և տեղադրում	10	10	10	10	10
131	Գեներատորի առանցքակալների հանում և տեղադրում	10	10	10	10	10
132	Մեկնարկիչի հանում և տեղադրում	6000	6000	6000	6000	6000
133	Մեկնարկիչի վերանորոգում	5000	5000	5000	5000	5000
134	Առջևի լապտերի հանում և տեղադրում	2000	2000	2000	2000	2000
135	Հետևի լապտերի հանում և տեղադրում	2000	2000	2000	2000	2000
136	Բոնկման կողպեքի հանում և տեղադրում	3500	3500	3500	3500	3500
137	Սարքերի պանելի հանում և տեղադրում	10	10	10	10	10
138	Հեռակառավարման համակարգի տեղադրում	10	10	10	10	10
139	Կողային ապակու բարձրացման մեխանիզմի փոխարինում	10	10	10	10	10
140	Կողային ապակու բարձրացման մեխանիզմի նորոգում	10	10	10	10	10
141	Կողային հայելիների նորոգում	10	10	10	10	10
142	Կողային հայելիների փոխարինում	10	10	10	10	10
143	Ապակելվացիչի շարժիչի հանում և տեղադրում	10	10	10	10	10
144	Ապակելվացիչի շարժիչի վերանորոգում	10	10	10	10	10
145	Դռների կենտրոնական փականի հանում և տեղադրում	5000	5000	5000	5000	5000
146	Վառոցքային լարերի հանում և տեղադրում	10	10	2000	2000	10
147	Էլ/հաղորդալարերի մասնակի վերանորոգում	3600	3600	3600	3600	3600
148	Էլ/հաղորդալարերի հիմնական խուրցի հանում և տեղադրում	4800	4800	4800	4800	4800
149	Էլ/հաղորդալարերի երկրորդային խուրցի հանում և տեղադրում	5000	5000	5000	5000	5000
150	Էլեկտրական տվիչների փոխարինում	1000	1000	1000	1000	1000

151	Էլեկտրական անջատիչների փոխարինում	10	10	10	10	10
152	Վառոցքի մոմերի փոխարինում	6000	6000	6000	6000	6000
153	Կոնդիցիոների լիցքավորում	15000	15000	15000	15000	15000
154	Կոնդիցիոների փոխրակների վերանորոգում	10	10	10	10	10
155	Կոնդիցիոների փոխրակների փոխարինում	10	10	10	10	10
156	Կոնդիցիոների վերանորոգում	10000	10000	10000	10000	10000
157	Լույսերի կարգավորում	10	10	10	10	10
158	Կոմպյուտերային ախտորոշում	5000	5000	5000	5000	5000
	9. Այլ ծառայություններ					
159	Ավտոմեքենայի թափքի հղկում և ներկում, գին 1 քառ.դմ-ի համար	5000	5000	5000	5000	5000
160	Անիվի հանում և տեղադրում	1000	1000	1000	1000	1000
161	Անիվի բալանսավորում	1000	1000	1000	1000	1000
162	Անվահեծի վերանորոգում	1500	1500	1500	1500	1500
163	Քարշակի ծառայություն գին 1կմ, համար	1000	1000	1000	1000	1000
164	Նստատեղի նորոգում	10	10	10	10	10
165	Դիմապակու փոխում	2000	2000	2000	2000	2000
166	Մեքենայի լվացում	1000	1000	1000	1000	1000
167	Մեքենայի սրահի քիմիական մաքրում	1500	1500	1500	1500	1500
168	Մեքենայի շարժիչի լվացում և փայլեցում	1500	1500	1500	1500	1500
ՏՍ-2 ավտոբուսում օգտագործվող պահեստամասերի, բաղադրիչների և այլ օժանդակ նյութերի անվանումները						
	1. Շարժիչ					
1	Բարձիկ	30000	30000	25000	25000	32500
2	Շարժիչի վերանորոգման կոմպլեկտ	10000	10000	10000	10000	10000
3	Շարժիչի գլխիկի միջադիր	18000	18000	18000	18000	18000
4	Մխոց	5000	5000	5000	5000	5000
5	Ատամնավոր փոկ	10	10	30000	30000	35000
6	Ատամնավոր փոկին ծգող մեխանիզմ	10	10	15000	15000	25000
7	Շղթա	10	10	10	10	10
8	Հիդրոծգան	10	10	10	10	10

9	Հրիչ	10	10	10	10	10
10	Հիդրոհրիչ	3500	3500	3500	3500	3500
11	Բաշմակ	10	10	10	10	10
12	Հանգստարար	10	10	10	10	10
13	Թափանիվ	10	10	10	10	10
14	Թափանիվի պսակ	10	10	10	10	10
15	Խցուկ բաշխիչ լիսեռի	8400	8400	8400	8400	8400
16	Շկիվ	10	10	10	10	10
17	Շարժաթև	10	10	10	10	10
18	Միջադիր	1000	1000	1000	1000	1000
19	Պարազիտային փոկանիվ	4800	4800	4800	4800	4800
	2.Ղեկավարման, սնման և յուղման համակարգ					
20	Յուղ շարժիչի կիսասինթետիկ, 1լիտր	4000	4000	4000	4000	4000
21	Յուղ շարժիչի սինթետիկ, 1լիտր	5000	5000	5000	5000	5000
22	Յուղի զտիչ	5500	5500	5500	5500	5500
23	Յուղի պոմպ	10	10	10	10	10
24	Յուղի պոմպի շարժաբեր	10	10	10	10	10
25	Վառոցքի մոմ	6500	6500	5500	5500	6500
26	Ինժեկտորի ֆորսունկա	5000	5000	5000	5000	5000
27	Վառելանյութի մղիչ էլեկտրական	35000	35000	35000	35000	35000
28	Վառելանյութի զտիչ	20000	20000	20000	20000	20000
29	Աքսելերատորի ճոպան	10	10	10	10	10
30	Օդի զտիչ	9000	9000	9000	9000	9000
31	Սրահի օդի զտիչ	10000	10000	10000	10000	10000
32	Յուղի տվիչ	10	10	10	10	10
33	Բաշխիչ լիսեռի տվիչ	10	10	10	10	10
34	Օդի ծախսի տվիչ	10	10	10	10	10
35	Թթվածնի տվիչ	10	10	10	10	10
	3. Սառեցման և արտածման համակարգ					
36	Ռադիատոր	90000	90000	90000	90000	90000
37	Ընդարձակող բաք	2000	2000	2000	2000	2000

38	Ռադիատորի փողրակ	3000	3000	3000	3000	3000
39	Թերմոստատ	20000	20000	20000	20000	20000
40	Ջրի պոմպի թևակ	10	10	10	10	10
41	Ջրի պոմպ	35000	35000	30000	30000	35000
42	Ջրի պոմպի առանցքակալ	10	10	10	10	10
43	Սառեցման հեղուկ 1 լիտր	2000	2000	2000	2000	2000
44	Ջրի պոմպի սռնանիվ	10	10	10	10	10
45	Հոլովակ	10	10	10	10	10
46	Փոկ	17000	17000	17000	17000	17000
47	Փոկ կոնդիցիոների	10	10	10	10	10
48	Կրոնշտեյն	10	10	10	10	10
49	Անուր (Խամուտ)	500	500	500	500	500
50	Վառարանի ռադիատոր	45000	45000	45000	45000	45000
	4.Կցորդում, ՓՏ և ԱՓՏ					
51	Փոխանցման տուփ	10	10	50000	50000	10
52	ՓՏ-ի առջևի խցուկ	10	10	2000	2000	1010
53	ՓՏ-ի հետևի խցուկ	10	10	2000	2000	10
54	ՓՏ-ի առանցքակալ	10	10	10	10	10
55	ՓՏ-ի առաջնային լիսեռ	10	10	10	10	10
56	ՓՏ-ի միջանկյալ լիսեռ	10	10	10	10	10
57	ՓՏ-ի եղանիկ	10	10	10	10	10
58	ՓՏ-ի ատամնանիվ	10	10	10	10	10
59	Համաժամիչ	10	10	10	10	10
60	Մուֆտ	10	10	10	10	10
61	ՓՏ-ի վերանորոգման կոմպլեկտ	10	10	3000	3000	10
62	ԱՓՏ-ի զտիչ	22000	22000	22000	22000	22000
63	ԱՓՏ-ի սկավառակների հավաքածու	20000	20000	20000	20000	20000
64	ԱՓՏ-ի առանցքակալներ	5000	5000	5000	5000	5000
65	ԱՓՏ-ի ներդիրներ	5000	5000	5000	5000	5000
66	ԱՓՏ-ի վերանորոգման կոմպլեկտ	25000	25000	25000	25000	25000
67	Տրանսմիսսիոն յուղ, 1 լիտր	5000	5000	5000	5000	5000
68	ԱՓՏ յուղ, 1 լիտր	6500	6500	6500	6500	6500
69	ՓՏ-ի առաջնային լիսեռ	7800	7800	7800	7800	7800

70	Հերմետիկ	2000	2000	2000	2000	2000
	5. Ղախոց					
71	Կրոնշտեյն	10	10	10	10	10
72	Ձախ կամ աջ հոդակապ	45000	45000	35000	35000	45000
73	Ձախ կամ աջ հոդակապի փոշեթիկնոց	6000	6000	6000	6000	6000
74	Անվակունդ	35000	35000	35000	35000	35000
75	Անվակուդի խցուկ	10	10	10	10	10
76	Անվակունդի ներքին առանցքակալ	33000	28000	20000	20000	33000
77	Անվակուդի արտաքին առանցքակալ	10	10	10	10	10
78	Հետևի անվակունդի ներքին առանցքակալ	33000	28000	20000	20000	33000
79	Հետևի անվակունդի արտաքին առանցքակալ	10	10	10	10	10
80	Ձախ կամ աջ հեդակապի խցուկ	5000	5000	5000	5000	5000
81	Հարվածամեղմիչի թասակ	30000	30000	21000	21000	30000
82	Զսպանակ	10	10	10	10	10
83	Առջևի հարվածամեղմիչ	70000	70000	60000	60000	70000
84	Հարվածամեղմիչի փոշեթիկնոց	10	10	10	10	10
85	Հարվածամեղմիչի վռան	10	10	10	10	10
86	Ներքևի լծակ	10	10	10	10	10
87	Ներքևի լծակի վռան	7200	7200	7200	7200	7200
88	Վերևի լծակ	10	10	10	10	10
89	Վերևի լծակի վռան	10	10	10	10	7200
90	Գնդե հոդակապ	18900	18900	18900	18900	18900
91	Առջևի կայունարար	10	10	10	10	10
92	Առջևի կայունարարի վռան	6000	6000	6000	6000	6000
93	Հետևի կայունարարի վռան	5500	5500	5500	5500	5500
94	Հետևի զսպանակ	10	10	10	10	10
95	Հետևի ցնցամեղմիչ	50000	50000	50000	50000	50000
96	Հետևի մետաղածող (շտանգա)	10	10	10	10	10
97	Հետևի մետաղածող (շտանգա) վռան	10	10	10	10	8000
98	Հետևի անկյունագծային լծակ	10	10	10	10	10
99	Անկյունագծային լծակի վռան	10	10	10	10	.8000
100	Կայունարարի կանգնակ առջևի	15000	15000	15000	15000	15000

101	Կայունարարի կանգնակ հետևի	15000	15000	15000	15000	15000
	6. Ղեկային մեխանիզմ					
102	Ղեկային կալուն	20000	20000	20000	20000	20000
103	Ղեկային կալունի առանցքակալ	10	10	10	10	10
104	Ղեկային կալունի խաչուկ	5000	5000	5000	5000	5000
105	Հիդրոուժեղարար	33000	33000	33000	33000	33000
106	Հիդրոուժեղարարի փոկ	10	10	10	10	10
107	Հիդրոուժեղարարի վերանորոգման կոմպլեկտ	10	10	10	10	10
108	Հիդրոուժեղարարի պոմպ	10	10	10	10	10
109	Հիդրոուժեղարարի պոմպի վերանորոգման կոմպլեկտ	10	10	10	10	10
110	Ղեկային ձող	10	10	10	10	10
111	Ղեկային ձողի ծայրակալ	14500	14500	14500	14500	14500
112	Ղեկային կալունի փոշեթիկնոց	10	10	10	10	10
113	Ղեկային կալունի խցուկ	10	10	10	10	10
114	Հիդրոուժեղարարի յուղ, 1 լիտր	5000	5000	5000	5000	5000
115	Ճոճանակ	10	10	10	10	10
116	Ճոճանակի վռան	10	10	10	10	10
	7.Արգելակային համակարգ					
117	Գլխ. գլան	2500	2500	2500	2500	2500
118	Գլխ. գլանի վերանորոգման կոմպլեկտ	10	10	10	10	10
119	Վակումային ուժեղարար	5000	5000	5000	5000	5000
120	Բանվ. գլան	10	10	10	10	10
121	Բանվ. գլանի վերանորոգման կոմպլեկտ	10	10	10	10	10
122	Արգելակային փոխրակ	5000	5000	5000	5000	5000
123	Սուպպորտի ուղղորդիչ	10	10	10	10	10
124	Սուպպորտի մոնժետ	10	10	10	10	10
125	Առջևի արգելակային կոճղակների կոմպլեկտ	30000	30000	30000	30000	30000
126	Հետևի սկավառակային կոճղակների կոմպլեկտ	30000	30000	30000	30000	30000
127	հետևի թմբուկայն կոճղակների կոմպլեկտ	10	10	10	10	10

128	Առջևի արգելակային սկավառակ	36000	36000	36000	36000	36000
129	Հետևի արգելակային սկավառակ	36000	36000	36000	36000	36000
130	Ձեռքի արգելակային ճոպան	10	10	10	10	10
131	Ձեռքի արգելակային կոճղակ	10	10	10	10	10
132	ABS-ի տվիչ	12500	12500	12500	12500	12500
133	Արգելակային հեղուկ, DOT-4 - 800գրամ	2000	2000	2000	2000	2000
134	Արգելակային հեղուկ, DOT-3 - 800գրամ	4000	4000	4000	4000	4000
135	Ձեռքի արգելակային ճոպան	10	10	10	10	10
	8. Էլեկտրասարքավորում					
136	Գեներատոր	60000	60000	60000	60000	60000
137	Գեներատորի դիոդային կամրջակ	30000	30000	30000	30000	30000
138	Գեներատորի ռելե	27000	27000	27000	27000	27000
139	Գեներատորի առանցքակալ	3500	3500	3500	3500	3500
140	Ստարտեր	50000	50000	50000	50000	50000
141	Ստարերի ռելե	8000	8000	8000	8000	8000
142	Ստարտերի ածուխ	18000	18000	18000	18000	18000
143	Բենդեքս	12000	12000	12000	12000	12000
144	Ստարտերի կցորդիչ (ավտոմատ)	10800	10800	10800	10800	10800
145	Առջևի լապտեր	1000	1000	1000	1000	1000
146	Առջևի թարթիչ	2000	2000	2000	2000	2000
147	Հետևի լապտեր	10	10	10	10	10
148	Հետևի թարթիչ	10	10	10	10	10
149	Արգելակային լապտեր	12000	12000	12000	12000	12000
150	Լամպ	9600	9600	9600	9600	9600
151	Էլեկտրական անջատիչ	10	10	10	10	10
152	Էլեկտրական տվիչ	2000	2000	2000	2000	2000
153	Ապակելվացիչ	10	10	10	10	10
154	Ապակելվացիչի շարժիչ	10	10	10	10	10
155	Էլեկտրական չափիչ սարք	10	10	10	10	10
156	Բռնկման կողպեք	10	10	10	10	10
157	Կողային հայելիներ	5000	5000	5000	5000	5000
158	Դիմապակի	55000	55000	55000	55000	55000
159	Էլեկտրալարերի գլխավոր խուրց	15000	15000	15000	15000	15000

160	Կոնդիցիոների փոխրակ	10	10	10	10	10
161	Էլեկտրալարերի երկրորդային խուրց	10	10	10	10	10
162	Վառոցքային լարերի խուրց	10	10	10	10	10
163	Էլեկտրաամբարձիչ	10	10	10	10	10
164	Վառոցքի մոմի ծայրակալ	5000	5000	3000	3000	5000
165	Ապակելվացիչի շարժիչ	10	10	10	10	10
166	Դռների կենտրոնական փական	10	10	10	10	10
167	Ապակելվացիչի հեղուկ 1լ	2000	2000	2000	2000	2000
168	Ներկ. լուծիչ, օժանդակ նյութեր գին 1դ/մ վերանորոգման համար	6000	6000	6000	5320	5650

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
Կառավարական տուն 3
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011018513
ՀՎՀՀ 02578338

Աշխատակազմի ղեկավար՝
_____Մ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ
«Մ-Բի-Ռ» ՍՊԸ
ք. Երևան, Մյասնիկյան 22/4
«Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ
Հ/Հ 220083335012000
ՀՎՀՀ 08417829

ՍՊԸ
_____Մ.ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Հավելված N 2
«02» մարտի 2018թ. կնքված
№ ՀՀ-ՏԿՀՆ-ԳՀԾՁԲ-18/1-6/4 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	50111130/1	Ավտոմեքենաների ընթացիկ սպասարկման և վերանորոգման ծառայություններ			200000	600000	600000	600000	1000000	1000000	1000000	1731600	1731600	1731600	1731600
Ընդամենը՝					***200000***	***600000***	***600000***	***600000***	***1000000***	***1000000***	***1000000***	***1731600***	***1731600***	***1731600***	***1731600***

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Վճարումները կատարվելու են փաստացի մատուցված ծառայությունների հիման վրա, բայց ոչ ավել քան տվյալ ամսվա համար սահմանված գումարից:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
Կառավարական տուն 3
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011018513
ՀՎՀՀ 02578338

Աշխատակազմի ղեկավար՝
_____Մ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ
«Մ-Բի-Ռ» ՍՊԸ
ք. Երևան, Մյասնիկյան 22/4
«Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ
Հ/Հ 220083335012000
ՀՎՀՀ 08417829

ՏՆՕՐ՝
_____Ա. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Հավելված 3
«02» մարտի 2018թ. կնքված
№ ՀՀ-ՏԿԶՆ-ԳՀԾՁԲ-18/1-6/4 ծածկագրով պայմանագրի

ԿԱՏԱՐՈՂ
«Մ-Բի-Ռ» ՍՊԸ
ք. Երևան, Մյասնիկյան 22/4
«Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ
Հ/Հ 220083335012000
ՀՎՀՀ 08417829

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն
ք. Երևան, Հանրապետության հրապարակ Կառավարական տուն 3
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011018513
ՀՎՀՀ 02578338

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«____» «_____» 2018թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԸՆԹԱՑԻԿ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» մարտի 2018թ.
Պայմանագրի համարը՝ *№ ՀՀ-ՏԿԶՆ-ԳՀԾՁԲ-18/1-6/4*
ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարությունը՝ ի դեմս աշխատակազմի ղեկավարի տեղակալ Ա.Ազատյանի և «Մ-Բի-Ռ» ՍՊԸ-ն՝ ի դեմս տնօրեն Վ. Բաղդասարյանի, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 2018թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		
1		Ըստ պայմանագրի	1 դրամ	1 դրամ				

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն
Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն
Կ.Տ.

Հավելված 3.1
«02» մարտի 2018թ. կնքված
№ ՀՀ-ՏԿԶՆ-ԳՀԾՁԲ-18/1-6/4 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության (այսուհետ՝ Պատվիրատու) և «Մ-Բի-Ռ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Կատարող) միջև 2018թ. մարտի -ին կնքված N № ՀՀ-ՏԿԶՆ-ԳՀԾՁԲ-18/1-6/4 գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 2018թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն